Դավիթ Թինոյան

# ՀԵԹՈՒՄ Ա-Ի «ՄՈՆՂՈԼԱԿԱՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

***Բանալի բառեր -*** մոնղոլական նվաճումներ, կայսրություն, Երուսաղեմի թագավորության, Հեթում, մահմեդական աշխարհ:

Հեթում Ա-ի (1226-1269 թթ.) գահակալման շրջանը իրավացիորեն կարելի է համարել Կիլիկիայի և նաև ողջ հայոց պետականության պատմության այն հազվադեպ դրվագներից մեկը, երբ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների միջև առկա փոխլրացնող հարաբերությունների հիման վրա հայոց պետականության արտաքին քաղաքականությունը և հարդյունս նաև պետության անվտանգությունը մեծապես ապահովագրված էր: Այդ համատեքստում պետք է դիտարկել Հեթումի և գրեթե նրան ժամանակակից Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի (1221-1267 թթ.) գործունեությունը: Հայ աշխարհիկ և հոգևոր իշխանության այս երկու առաջնորդների գործունեության ժամանակահատվածը համընկավ Մերձավորարևելյան տարածաշրջանում տեղի ունեցած հիրավի հեղափոխական նշանակություն ունեցած վերափոխումների հետ: Ընդհանրապես XII դարավերջը և XIII դարի առաջին կեսը նշանավորվեցին երկու խոշոր տարածաշրջանային փոփոխություններով: Առաջինը համընկավ Լևոն Ա Մեծագործ թագավորի գահակալման հետ (1198-1219 թթ.), երբ Մերձավոր Արևելքում և մասնավորապես լևանտյան տարածաշրջանում Երուսաղեմի թագավորության անկումով նվազագույնի հասցվեց արևմտաքրիստոնեական ռազմաքաղաքական ուղիղ ներկայությունը: Այդուհետ առաջացած բացը լրացվեց եգիպտական պետության ռազամաքաղաքական դոմինանտությամբ, որը պահպանվեց ընդհուպ մինչև օսմանյան նվաճումները: Սակայն եթե առաջին դեպքում փոփոխությունները ուղղակիորեն առնչվում էին հիմնականում արևելամիջերկրածովյան տարածաշրջանին, ապա երկրորդ դեպքում այն իր մեջ ներառեց ամբողջ Արևելյան Ասիան: Խոսքը մոնղոլական արշավանքների և նվաճումների մասին է, որի աշխարհաքաղաքական ազդեցությունը շատ ավելի մեծ էր: Առաջինի դեպքում Լևոնին հաջողվեց օգտվել թուլացած եվրոպական տիրակալների՝ իր միջոցով իրենց ներկայությունը տարածաշրջանում ամրապնդելու ցանկությունից և ստանալ թագավորական իշխանության տարբերանշաններ: Եգիպտական ազդեցությունը սահմանափակվեց Լևանտով և մերձակա տարածքներով, որի գերիշխանությունը 12-րդ դարավերջին և 13-րդ դարասկզբին՝ Սալահ ալ–Դինի մահից հետո նկատելիորեն նվազեց՝ վերստին վերելք ապրելով ավելի ուշ՝ 13-րդ դարակեսին միայն, երբ այստեղ իշխանության եկան մամլուքները: Ռումի սուլթանության հզորացումը և տարածաշրջանային գերիշխող դերակատարումը Լևոնի և Հեթումի գահակալման տարիներին փաստացիորեն ունեցան տարածաշրջանային նշանակություն[1]: Միանգամայն այլ էր իրադրությունը Հեթումի գահակալության շրջանում: Քննարկման նյութ չդարձնելով Ռումի սուլթանության հետ հարաբերությունները՝ փաստենք, որ Հեթումը փաստացիորեն մոնղոլական արշավանքների շրջանում հարկադրված էր ընդունել սուլթանության գերակայությունը: Ինչևէ, հենց մոնղոլական նվաճումները ամբողջապես փոփոխեցին տարածաշրջանի աշխարհաքաղաքական խճապատկերը: Դրանց ազդեցությունը հայոց թագավորության և ընդհանրապես «հայկական աշխարհի» վրա իրապես չափազանց մեծ էր: Նախ՝ Փոքր Ասիայում 1250-ական թվականներից սկսյալ իր առաջնային դերակատարումը կորցրեց Ռումի սուլթանությունը, որն այլևս երբեք ի վիճակի չէր լինելու լրջորեն վտանգելու հայոց թագավորության կենսագործունեությունը: Երկրորդ՝ արդյունքը սերտորեն առնչվում է եգիպտական (և կամ արդեն կարելի է նշել մամ-

[1] Չնայած պետք է նշել, որ Ռումի սուլթանության տարածաշրջանային նշանակության համատեքստում գրեթե աննկատ կերպով 13-րդ դարավերջին սկսեց ձևավորվել նոր՝ առաջին հայացքից աննշան գործոն՝ օսմանյան պետությունը, որը կարճ ժամանակ անց ձեռք եր բերելու տարածաշրջանային նշանակություն:

լության) գործոնի հետ: Եթե սկզբնական շրջանում մոնղոլները այստեղ որոշակի հաջողություններ ունեցան, ապա կարճ ժամանակ անց մոնղոլական վտանգը փաստացիորեն հակադիր համախմբող գործոնի դերակատարում ստանձնեց մահմեդական աշխարհի և դրա շահերի պաշտպանի դերակատարումը ստանձնած եգիպտական սուլթանության համար, ուր շուտով տեղի էր ունենալու նաև կառավարման համակարգի փոփոխություն ևս: Ձուտ հայկական քաղաքակրթության տեսանկյունից մոնղոլական ներկայությունը բավական լուրջ վերափոխումներ մտցրեց «հայկական աշխարհում»: Երկար դարեր ի վեր առաջին անգամ Մեծ Հայքը և մնացյալ բուն հայկական տարածքները մեկ տերության սահմաններում էին գտնվելու: Փաստացիորեն, թեկուզև միջնորդավորված, այդ միջավայրի մեջ էր գտնվելու նաև Կիլիկիայի Հայոց թագավորությունը, որն, ընդունելով մոնղոլական գերակայությունը, հայտնվել էր այդ հսկայածավալ տերության հովանու ներքո: Չնայած մոնղոլական նվաճումների ավերիչ ազդեցությանը՝ հայկական քաղաքակրթության համար հարկ է նշել, որ Մեծ Հայքի հետ կիլիկյան հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները սրանով մի նոր փուլ էին թևակոխում: Անշուշտ, կիլիկյան աշխարհիկ և հոգևոր իշխանությունների գերակայությունը «արևելյան գավառներում» (Մեծ Հայք և հարակից հայաբնակ տարածքներ-Դ.Թ.) ուներ և՛ իրավական և՛ ավանդական նշանակություն: Այսպես, եթե հոգևոր առաջնորդի՝ կաթողիկոսի իշխանությունը անառարկելի էր իրավական տեսանկյունից, ապա միապետի իշխանության ընկալումը փոքր ինչ այլ էր: Հարկավ «թագավոր ամենայն հայոց» տիտղոսը, որի կրողն էր Հեթումը իր մեջ պարունակում էր նաև իրավագիտակցական բավական լայն շերտ. չէ՞ որ արքան փաստացիորեն հռչակվել էր որպես բոլոր հայերի արքա, որտեղ էլ որ նրանք լինեն, բայց այդուհանդերձ նրա գերակայությունն ուներ ոչ այնքան իմպերատիվ բնույթ որքան որ հիմնված էր ավանդական autoritas-ի (իշխանություն, հեղինակություն) վրա: Այսինքն՝ չնայած տարածական ու իրավիճակային տարաբնույթ հարթություններին, որոնք առկա էին հայության մի կողմից կիլիկյան, մյուս կողմից «արևելյան հատվածի» միջև, թագավորի ունեցած համահայկական տիտղոսը և միապետի ավանդական autoritas-ը տալիս էին «հայկական աշխարհի» նկատմամբ գերակայության «բնական» իրավունքներ: Այդ իրավունքներով հանդերձ, անշուշտ, Հեթումը ուներ նաև որոշակի պարտավորություններ իր թագավորության տիտղոսակիր էթնիկ հանրույթի արևելյան հատվածի հանդեպ: Այդ առումով դիպուկ է նկատում Մ. Օրմանյանը. «Այդ միջոցին էր, որ Հեթում թագաւոր ալ ուշադրութիւն դարձուցած էր արեւելեան գաւառներուն վրայ, որոնց բախտը այլ եւս թաթարներուն կամքէն կախում ունէր, եւ մտածեց եւս քանզեւս մշակել անոնց հետ բարեկամութիւնը, թէ իր թագաւորութեան ապահովութիւնը ձեռք բերելու, եւ թէ ներքին գաւառներու հայերուն բարօրութեան նպաստելու համար»[1]: Այստեղ հարկավ որպես հակընդդեմ երևույթ կարելի է դիտարկել Վրաց թագավորության գործոնը, որը իրավական առումով համարվում էր սյուզերեն գոնե հյուսիսարևելյան հայկական գավառների աշխարհիկ վերնախավի համար: Եվ այդ առումով մոնղոլական տիրապետության հաստատումը որոշակիորեն լայնացնում էր Հեթումի հնարավորությունները տեղի հայկական վերնախավի մոտ առաջնության և վրաց թագավորի հետ մրցակցության խնդրում: Ինչևէ, մոնղոլական տիրապետության հաստատումը տարածաշրջանում հարկադրեց Հեթումին սկզբնապես դիվանագիտական, իսկ քիչ անց նաև ստորակա-դաշնակցային հարաբերություններ հաստատելու նրանց հետ: Խորամուխ չլինելով հայոց թագավորի և մոնղոլական ներկայացուցիչների հետ առաջին շփումների մեջ, որոնք ավարտվեցին Ռումի սուլթանի ընտանիքի մոնղոլներին հանձնումով, (նշենք որ այդ խնդիրները քննարկվել են մեր մեկ այլ հոդվածում[2]): Ավելացնենք միայն, որ խնդրո առարկա վարմունքը (իր մոտ ապաստան գտած սուլթանական ընտանիքի հանձնումը մոնղոլներին) հարկավ արդարացված էր պետության շահերի տեսանկյու-

[1] Օրմանեան Մ., Ազգապատում, Հայ ուղղղափառ եկեղեցւոյ անցքերը մինչեւ մեր օրերը, էջմիածին, 2001, Հատոր Բ, սյուն 1912-1913:

[2] Կիլիկիայի հայոց թագավորության ներքաղաքական և արտաքին քաղաքական իրադրությունը 1240 թթ., Լրաբեր Հասարակական գիտությունների, 2016, 1, էջ 126-136:

նից: Եվ այդ ամենը ճիշտ էր ընկալվում նաև հասարակության կողմից. գրիչ Գրիգորիսը, թվարկելով մոնղոլական արշավանքների սարսափները տարածաշրջանի և տեղի ժողովուրդների համար, նշում է. «Արդ, ի սոյն այս բազմավրդով ժամանակի, ի ձեռն վերոյ նշանակեալ թագաւորին Հեթմոյ խորագէտ իմաստութեան և նախահոգակ հանճարեղութէան, մէք մնամք ի խաղաղութեան՝ որպէս կղզի ինչ ի յալեաց մնացեալ յանդորր…»[1]: 1240-ական թթ. վերջին, առավել ստույգ 1250 թ. Հեթումին հաջողվում է նաև վերջապես ծնկի բերել Լամբրոնի Հեթումյանների տոհմին, որն ավելի քան մեկ դար ներքաղաքական անկայունության գլխավոր կենտրոններից մեկն էր[2]: Բացի դա վերջիններիս հետ հաստատվում են խնամիական ամուր կապեր, որի արդյուքնում թագաժառանգ Լևոնը ամուսնանում է Կոստանդին Լամբրոնացու դստեր՝ Կեռանի հետ: Բայց, հարկավ, Հեթումի և նրա մերձավոր գործակից Կոստանդին Բարձրբերդցու գործունեության հիմնական թիրախը հայ-մոնղոլական հարաբերություններն էին: Անշուշտ հեռու լինելով հայ-մոնղոլական հարաբերությունները բացառապես դաշնակցային որակելու մտքից, ներառելով հայոց արքունիքի ստորակարգությունը մոնղոլ ղանի իսկ ապա և իլխանի հանդեպ՝ պետք է նշել, որ դրանք որակական այլ հարթության վրա գտնվող հարաբերություններ էին: Խնդիրն այն էր, որ որքան էլ հայոց թագավորը ենթակայական փոխհարաբերությունների մեջ էր, այդուամենայնիվ Հայոց պետությունը չէր ընկալվում և գործնականում ներառված չէր մոնղոլական տերության մեջ: Ի տարբերություն այս օրինակի՝ նշենք, որ ինչպես Հեթումը, վրաց թագուհին ևս մեկնեց Կարակորում: Վրաց թագավորի տիրույթները ընկալվում էին որպես մոնղոլական տերության մաս: Սա անչափ կարևոր հանգամանք է միջնադարյան իրավագիտակցության տեսանկյունից: Հարկ է նշել, որ մոնղոլական իշխանությունները խնդրո առարկա շրջանում նկատելիորեն փոփոխել էին իրենց քաղաքականությունը նվաճված երկրամասերի բնակչության հանդեպ: Ավերի ու կոտորածների քաղաքականությունից նրանք աստիճանաբար անցում էին կատարում տվյալ երկրների խաղաղ կառավարման քաղաքականությանը: Պատահական չէ, որ Վարդան Արևելցին ևս նշում է այդ փոփոխության մասինսակայն ամենին տալով որոշակի կրոնական երանգավորում. «… Եւ ասեն, թէ երեք էին գլխաւորք, և մինն բարեբարոյ, քան զերկուսն, զոր Չարմաղանն կոչէին, որք և զկնի բազում աշխարհաց աւերման և կոտորման նստեալ ի խորհուդս, զոր ղուրուլթայ կոչեն և ասացեալ Չարմաղանին, թէ բաւական է աւերս և կոտորուածս, յայսմհետէ զհնազանդեալսն մեզ մի ջնջեսցուք ի սպառ, զի մի բարկասցի Աստուած: Իսկ երկու գլխաւորքն հակառակեալք ընդ նմա՝ ասացին, թէ ոչ է պարտ մեզ ապրեցուցանել և ոչ զոք, որովհետև յաջողէ մեզ Աստուած: Եւ տրտմութեամբ ննջեցին զգիշերն այն և յայնմ գիշերի մեռան երկոքինն, որ զանողորմութիւն կամէին… և առաքեաց [ղանը] հաստատեաց զկամս Չարմաղանին աւրինաւք խնայել ի հնազանդեալսն և դնել ի ներքոյ հարկի»[3]: Սա առավելապես վերաբերում էր տարածաշրջանի քրիստոնեական համայնքներին և տնտեսական հարցեր լուծելուց բացի ուներ ընդգծված քաղաքական նկատառումներ: Բանն այն է, որ չժխտելով մոնղոլական նորահաստատ իշխողների՝ քրիստոնեության նկատմամբ հակվածության վարկածը՝ այդուհանդերձ պետք է նշել, որ այժմ քրիստոնյա հանրույթը նրանց կողմից ընկալվում էր որպես բնական դաշնակից Ասորիքը և հեռանկարում Եգիպտոսը նվաճելու խնդրում: Հարկ է ուշադրություն դարձնել նաև հայոց թագավորության անվտանգության խնդիրներին, որոնք որ այս շրջանում բավական մտահոգիչ էին: Ամբողջ 1245-1256 թթ. շրջափուլն անցավ Իկոնիայի սուլթանության և նրա հետ դաշնակցած Կոստանդին Լամբրոնացու դեմ ռազմական գործողություններով, որոնք որ սկզբնական հատվածում ամենևին էլ հաջող

---

[11] «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Ե.1984, էջ 233: «Այն, ինչ Ռուբրուկը չընկալեց, Կիլիկիո Հայոց թագավորը կռահեց միանգամից: Այդ հմուտ միապետը, որը հասկացել էր մոնղոլների ներխուժման ողջ կարևորությունը խաչի և մահիկի պայքարում, համարձակորեն ընդունեց նրանց հովանավորությունը, որպեսզի կարողանա օգտվել նրանց պաշտպանությունից»: Գրուսսէ Ռ., Պատմություն Խաչակրաց, էջ 315, Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, Հատոր Ա, Ե. ,2005:

[2] Ալիշան, Ղ., Սիսուան եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ,1885, էջ 85:

[3] «Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի պատրիարքի ասորւոց», Յերուսաղէմ, 1870., Յաւելուած ի Վարդանայ, էջ 617:

չէին ընթանում Հայոց թագավորության համար: Այսպես՝ 1245 թ. իկոնիացիները գրավում են Պրականան, իսկ արդեն հաջորդ տարի պաշարում են Տարսոնը[1]: Իկոնիայի սուլթան Ալաէդդինի՝ հայոց թագավորության այդ ոխերիմ հակառակորդի մահը տեղի ունեցավ նույն 1246 թ. Տարսոնի պաշարման ժամանակ, ուր նրան էին միացել նաև Հեթումյանների հակընդդեմ ճյուղի՝ Լամբրոնացիների ուժերը: Իրավիճակի նման հանդարտեցումից հետո այժմ արդեն հայոց արքունիքը և հատկապես հայոց սպարապետը կարող էին ձեռնամուխ լինել դեպի Մոնղոլիա պատվիրակության ուղարկմանը: Ինչևէ, նախապես ձեռք բերված համաձայնությունների հիման վրա՝ 1247 թ. արքաեղբայր Սմբատ սպարապետը բանակցությունների նպատակով մեկնում է մոնղոլական կայսրության մայրաքաղաք Կարակորում, ուր և հանդիպում է կայսրության տիրակալ Գույուկ ղանի հետ. «Ի թուին 697 գնացի ես Սմբատ գունդստապլս ի Թաթարն, եւ ի թուին 699 դարձայ առ իմ եղբայրն Հեթում թագաւորն»[2],- գրում է Սմբատը: Ընդ որում նա բավական ժլատ է իր այցելության մասին տեղեկություններ հաղորդելու առումով: Այդ մասին հավելյալ տեղեկություններ է հաղորդում Կիրակոս Գանձակեցին. «Արքայն հայոց Հեթում, որ է իր Կիլիկիա, առաքեաց զեղբայր իւր Սմբատ Զօրավարն առ ղանն երևելի պատարագօք: Եւ նորա երթեալ խաղաղութեամբ զերկայնութիւն ճանապարհին, և յոյժ մեծարեալ ի նմանէ, դարձաւ երևելի փառօք և հաւատարիմ հրովարտակօք՝ տուեալ նմա գաւառս բազումս և բերդս յոլովս, զոր յառաջ լեալ էր Լևոն արքայի, և զկնի մահուանն առ ի նոցունց Ալադին սուլտանն հոռոմոց»[3]: Ըստ ամենայնի, մոնղոլ տիրակալը պարտավորվել էր որպես նախատեսվող դաշնադրության վկայություն վերադարձնել հայոց թագավորի վաղեմի տիրույթները այն բանից հետո, երբ Հեթումը անձամբ ներկայանար իր մոտ: Դրանից բացի՝ որոշակիորեն առարկայանում է նաև Իկոնիայի սուլթանության հանդեպ Հայոց թագավորության գերիշխանության փաստը: Այսպես՝ Կիրակոս Գանձակեցին հաղորդում է, որ սուլթանի մահից հետո, ըստ երևույթին Սմբատի Կարակորում այցելությանը գրեթե միաժամանակ «...և մնացին նորա որդիք երկուք մանուկ տիովք: Եվ ընդ հակառակս լեալ նոցա, չոգաւ մինն ի նոցանէ առ ղանն, և առ ի նմանէ զիշխանութիւն հօր իւրոյ, և դարձաւ ընդ Սմբատայ զօրավարին հայոց: Եվ եկին առ Բաչունուինն և առ այլ աւագանին, և նոցա հաստատեալ զիրամանս արքային իւրեանց տան զօրս զկնի նոցա՝ տանել զնոսա յերկիր իշխանութեան իւրեանց»[4]: Սա խոսում էր Հայոց թագավորության քաղաքական վերնախավի հետ ունեցած դաշնակցային հարաբերությունների մասին, որտեղ, իհարկե, ամենևին էլ ժխտելի չէ հայկական կողմի ստորակա կարգավիճակը ղանական արքունիքի հանդեպ: Ինչևէ, Սմբատը հայրենիք վերադարձավ արդեն 1249 թ., սակայն նույն թվականին Գույուկը մահացավ, և հայոց արքային հյուրընկալողը պետք է լիներ արդեն Մանգու մեծ ղանը: Մանգու ղանի կողմից այցելության հրավերը ուղարկվել էր դեռևս մի քանի տարի առաջ: Հեթումը, ինչ-ինչ պատճառներից ելնելով, դեռևս չէր շտապում իրականացնել այդ այցելությունը: Պատճառներից մեկն, անշուշտ, երկրի ներքին անկայուն իրադրությունն էր, որքան էլ որ Իկոնիայից բխող վտանգը չեզոքացվել էր ներքին խժդժությունների հիմնական պատճառ հանդիսացող Կոստանդին Լամբրոնացին սպանվել է միայն 1250 թ., բացի այդ դեռ ամբողջովին չէր չեզոքացվել Իկոնիայից բխող ներխուժման վտանգը, որի դրսևորումներից էր նաև 1249 թ. բախումը[5]: Ուշացման պատճառ կարող էր հանդիսանալ նաև արքայական ընտանիքում խնդիրների առկայությունը: 1251 և 1254 թթ. Հեթումը ամուսնացրեց նաև իր երկու դուստրերին: Շատ ավելի սկզբունքային պատճառ էր արքայի երկարամյա կողակից Զաբել թագուհու մահը 1252 թ., որն իրապես ծանր ազդեցություն գործեց հայոց թագավորի վրա: Պետք չէ անտեսել այդ երկար ճանապարհին նաև արքայի անձնական

[1] Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 314, 554:
[2] «Տարեգիրք Սմբատայ սպարապետի Հայոց», Փարիզ, 1859, էջ 124: Սամուէլ Անեցու Շարունակողի մոտ հիշատակվում է այս իրադարձության տեղի ունենալու 1246 թվականը: Տես Սամուէլ Անեցի եւ Շարունակողներ, Ժամանակագրություն, Աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Ե. 2014, էջ 247:
[3] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք Օհանջանյանի, Ե. 1961, էջ 317:
[4] Կիրակոս Գանձակեցի, էջ 317-318:
[5] Ալիշան Ղ., նշվ .աշխ., էջ 554:

անվտանգության հարցը. «...Եւ նա երկուցեալ ի նմանէ՝ գայ գաղտագողի, այլակերպեալ զինքն վասն ահին թուրքաց, որք սահմանակիցք նորա էին, զոր հոռոմոց (Ռումի-Դ.Թ.) սուլտանն անուանեն, որում անուն էր Ազադին, զի ոխս մթերեալ ունէին ընդ նմա վասն ձեռն տալոյ նորա ի թաթարն»[1]: Այս բոլոր խնդիրների առկայության պայմաններում կարծում ենք, որ հետաձգման հիմնական պատճառն այլ էր: Այն կապված էր աշխարհաքաղաքական գործընթացների հետ, որի համատեքստում հայոց արքան որոշակի սպասողական դիրքորոշում էր որդեգրել մոնղոլական կայսրության ամրության հարցում: Այժմ արդեն պարզ էր, որ մոնղոլական ներկայությունը տարածաշրջանում երկարատև է լինելու, ուստի և հապաղելու պատճառ այլևս չկար: Բացի այդ, ըստ երևույթին հայոց արքունիքին հայտնի էր մոնղոլների կողմից մերձավորարևելյան տարածաշրջանի վերջնական նվաճմանը միտված խոշորածավալ արշավանքի նախապատրաստումը: Եվս մեկ կարևոր նկատառում. չնայած առաջացած տարիքին և այն հանգամանքին, որ արքայի բացակայության ընթացքում թագապահ պաշտոնյայի դերակատարումը դրվել էր արքայի որդիների՝ Լևոնի և Թորոսի վրա, այնուամենայնիվ հայ մոնղոլական այս շփումներում իր ակտիվ դերակատարումն էր պահպանում նաև Կոստանդին թագավորահայրը[2]: Եվ իհարկե կարևոր դերակատարում ունեցավ Բաթուի՝ Ոսկե Հորդայի տիրակալի իրեն և Մանգու ղանին ներկայանալու արդեն երկրորդ փաստացի հրավերը: Այս դեպքում արդեն հապաղումը որևէ կերպ ընկալելի չէր լինի: Արքան Կարակորում մեկնեց 1254 թ.՝ զգուշանալով, ինչպես վերը նշվեց իկոնիացիների և թերևս ոչ միայն նրանց վրեժխնդրությունից: Արքայական պատվիրակությունը ճանապարհն անցավ ծպտված և արագորեն հասավ Կարս[3]: Այստեղ նա հանդիպում է մոնղոլական արևելյան զորախմբի հրամանատար Բաչու նուինի հետ, ապա անցնելով Ախուրյան գետը՝ հանգրվանում է Արայի լեռան մոտ գտնվող Վարդենիս ավանում՝ Արևելյան Հայաստանի ազդեցիկ իշխաններից մեկի՝ Քուրդ Վաչուտյանի ապարանքում: Հայոց արքայի ժամանումը Մեծ Հայք, անշուշտ պատմական իրադարձություն կարելի է համարել տեղի հայության համար, չէ՞ որ նմանատիպ այցելություն առաջին անգամ էր տեղի ունենում: Սակայն Կիրակոս Գանձակեցու մոտ, որը այս առիթով փաստացի միակ աղբյուրն է, մենք չենք հանդիպում հայոց թագակրի հանդեպ Մեծ Հայքի արևելյան հատվածների աշխարհիկ և հոգևոր իշխանների այնպիսի վերաբերմունք, ինչպիսին եղավ Հեթումի վերադարձից հետո: Իրավ, պատմիչը հաղորդում է, որ արքան կանգ առավ Քուրդ իշխանի ապարանքում՝ սպասելով այստեղ մի որոշ ժամանակ հոր՝ Կոստանդին պայլի կողմից մոնղոլների համար նախատեսված նվերների բերմանը: Այլևս ոչինչ չի ավելացնում պատմիչը հայոց արքայի Հայաստանում գտնվելու ամիսների վերաբերյալ: Ըստ ամենայնի՝ խնդիրն այն էր, որ տեղի հայ աշխարհիկ կառավարիչները դեռևս վստահություն չունեին Հեթումի հանդեպ, մոնղոլական իշխանությունների դաշնակցային և բարյացակամ վերաբերմունքի վրա, ուստի և խուսափել են նրա հետ բացահայտ շփումներից: Ասվածի վկայությունը կարող է լինել թագավորի վերադարձին ունեցած հանդիպումները տեղի աշխարհիկ և հոգևոր կառավարիչների հետ, որոնք ունեին բացահայտ բնույթ և պայմանավորված էին Մոնղոլիայում Հեթումի վարած բանակցային գործընթացի բարեհաջող ավարտի հետ: Այս ամենը չի ենթադրում, որ Վարդենիսում մնալու ընթացքում նմանատիպ շփումներ չեն եղել: Կարծելի է, որ դրանք եղել են, բայց կրել են գաղտնի բնույթ: Համաձայն Մ. Օրմանյանի հաշվումների՝ արքան Մեծ Հայքում մնացել է մոտ երեք ամիս[4]: Նա այդ եզրահանգմանն է եկել՝ հիմք ընդունելով Մ. Չամչյանի ներկայացրած ամսաթիվը, այն է՝ 1254 թ. փետրվարի երեքը՝ որպես Սսից դուրս գալու սկիզբ և մայիսի 13-ը, որպես Ճորա Պահակից Մոնղոլիա ուղևորվելու ամսաթիվ: Իրապես այդ ամենի հանրագումարը ստացվում է երեք ամսից ավելին: Կարելի է

[1] Կիրակոս Գանձակեցի, նշվ.աշխ. էջ 364:
[2] Վերջինս մահացավ միջնադարյան գիտակցության համար խոր ծերության հասակ համարվող տարիքում՝ 1263 թ. փետրվարին:
[3] Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 364:
[4] Օրմանեան Մ., նշվ. աշխ., սյուն 1927:

կարծել, որ արքան սելջուկների կողմից վերահսկվող տարածքները անցել է բավական արագ, բայց դա էլ որոշ ժամանակ է պահանջում: Դրան գումարած նաև Վարդենիսից կատարած ուղևորությունը դեպի Ճորա Պահակ և այստեղ արդեն Բաթուի մոտ ունեցած հյուրընկալությունը: Այդ ամենը հաշվի առնելով՝ կարծում ենք, որ Մեծ Հայքի արևելյան շրջաններում Հեթումը գտնվել է երեք ամսից էլ պակաս: Ինչևէ, արքայի ուղևորությունը մոնղոլական դանի նստավայր ընդմիջվեց Բաթուի արքունիքում ունեցած հյուրընկալությամբ: Պատմիչի խոսքերից դատելով՝ Հեթումը այստեղ արժանացել է լավ ընդունելության: Հատկանշական է, որ այստեղ արքային հյուրընկալողների մեջ էր նաև Բաթուի քրիստոնյա որդին՝ Սարթախը, որին հետագայում հայոց արքան կրկին հանդիպում է արդեն վերադարձի ճանապարհին: Ինչևէ, ողջ ճանապարհորդությունը տևում է չորս ամիս: Հայկական պատվիրակությունը 1254 թ. սեպտեմբերի 13-ին հյուրընկալվում է մեծ խանի նստավայրում: Ըստ էության՝ հայոց արքան արժանանում է ամենաբարձր մակարդակի ընդունելության: Այս այցի արդյունքն է լինում Կիլիկիայի հայոց թագավորության և Մոնղոլական կայսրության միջև արդեն առկա դաշնակցային հարաբերությունների ամրագրումը: Նաև այս այցի արդյունքն էր իրավական առումով մոնղոլական գերիշխանության ամրագրումը Հայոց թագավորության հանդեպ: Այստեղ քննության չառնելով Հեթում պատմիչի տեղեկությունները հայոց թագավորի մոնղոլների քրիստոնեության ընդունման վերաբերյալ առաջ քաշած պահանջներին՝ հպանցիկ նշենք, որ տվյալ շրջափուլում որոշակի աշխատանք տարվում էր մոնղոլներին քրիստոնեությանը բերելու ուղղությամբ: Փաստ էր, որ մոնղոլները ձգտելու էին Առաջավոր Ասիայում տիրապետող դիրքեր գրավել և այդ ճանապարհին որպես տարածաշրջանի առավել կենսունակ ու ռազմունակ ռազմաքաղաքական միավորներ հիմնական հակառակորդ համարելու էին մահմեդական պետություններին: Փաստ է նաև, որ ելնելով վերոգրյալից՝ տարածաշրջանի քրիստոնյա ազգաբնակչությունը (այդ թվում և Կիլիկիայի) դիտարկվելու էր ընդհանուր հակառակորդի դեմ օգտագործման տիրույթում, և մոնղոլները ամեն կերպ ձգտելու էին կործանել հակընդդեմ ուժը, այս պարագայում՝ իսլամի հոգևոր կենտրոն Բաղդադի խալիֆայությունը, ինչը որ և տեղի ունեցավ ընդամենը երեք տարի անց: Հայոց թագավորության իրավա-քաղաքական և ռազմաքաղաքական կշիռը անհամապատասխան էր այն պահանջներին, որոնք որ պատմիչի կարծիքով առաջադրվել էին հայոց թագավորի կողմից Մանգուին: Ինչևէ, բացի դաշինքի վերահաստատումից, անչափ կարևոր էր նաև Մանգուի տված հայ եկեղեցու ազատության յառլիկը.( խանական հրովարտակ-Դ.Թ. ) «… ետ և գիր ազատութեան եկեղեցեաց ընդ ամենայն տեղիս» [1] : Սա անկասկած մեծագույն դիվանագիտական ձեռքբերում էր, որը, ինչպես նշվեց լիովին ընդգրկվում էր մոնղոլների մերձավորարևելյան քաղաքականության տիրույթում: Հայոց թագավորը Մանգուի կեցավայրում մնաց հիսուն օր և նոյեմբերի սկզբներին ուևորվեց դեպի արևմուտք, որտեղ և հանդիպեց մոնղոլական մերձավորարևելյան ուղղության հրամանատար Հուլավուին: Վերջինս մոնղոլների կողմից հիմնական պատասխանատուն էր հայ-մոնղոլական դաշինքի հարցում: Վերահաստատելով ձեռք բերված համաձայնությունները և ըստ ամենայնի հենց այստեղ ձեռք բերելով մերձավորարևելյան առաջիկա արշավանքի մարտավարությանը վերաբերող որոշումները՝ արքան ուղևորվում է Հայաստան՝ կրկին հյուրընկալելով Վարդենիսում [2] : Այստեղ արդեն Հեթումին են ներկայանում հայ աշխարհիկ և հոգևոր իշխանության բազում ներկայացուցիչներ. «Ապա եկին առ նա վարդապետքն իւր…. այլ և եպիսկոպոսք և վարդապետք և քահանայք և իշխանք քրիստոնեից»[3]: Հեթումը բավական երկար է մնում Հայաստանում (ավելի քան վեց ամիս), քանզի նրա հանդիսավոր վերադարձը Կիլիկիա տեղի է ունենում միայն 1256 թ. հունիսի հինգին[4]: Ամփոփելով նշենք, որ Հեթում Ա-ին հաջողվեց տարածաշրանային խիստ անբարենպաստ իրավիճակում հմտորեն զերծ պահել

[1] Կիրակոս Գանձակեցի, էջ 366:
[2] Ըստ պատմիչի բերած հաշվումների արքան Հայաստան է ժամանում արդեն 1255 թ. հուլիսի սկզբին:
[3] Կիրակոս Գանձակեցի, էջ 370:
[4] Մինչ այդ Հեթումը ընկերակցեց նաև Բաչուին իկոնիացիների դեմ կազմակերպված արշավանքին: